ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՍՎ-4

ք. Երևան «27» հեկտեմբերի 2018 թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ. Հովհաննիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Նվիրաբերող» մի կողմից և Մեղրու համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Զաքարյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Նվիրաբերություն ստացող», մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի և «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ և 10-րդ հոդվածի 5-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգի համապատասխան դրույթներով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Մեղրի համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման նպատակով սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող՝ N1 հավելվածով հաստատված ծրագրի իրականացման տեխնիկական բնութագրին և N2 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցին համապատասխան՝ Նվիրաբերողը Նվիրաբերություն ստացողին է հատկացնում Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված **1 254 300** (մեկ միլիոն երկու հարյուր հիսունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ սուբվենցիայի գումարը:

2. ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Սույն պայմանագրի համաձայն Նվիրաբերողը փոխանցումները Նվիրաբերություն ստացողին կատարում է հաշվետու եռամսյակի՝

ա) առաջին և երկրորդ ամսվա համար բյուջետային ծախսերի նախահաշվով տվյալ եռամսյակի համար նախատեսված ֆինանսավորման գումարի 1/3 մասի,

բ) իսկ երրորդ ամսվա համար՝ հաշվետու եռամսյակի արդյունքներով ներկայացված սուբվենցիայի հերթական մասնաբաժնի ստացման համար համայնքից պահանջվող փաստաթղթերով (համայնքի և մատակարարի, կապալառուի, ծառայություն մատուցողի միջև կնքված պայմանագրից քաղվածք, հանձնման-ընդունման արձանագրություն, կատարողական ակտ, հաշիվ-ապրանքագիր և/կամ այլ հիմնավորող փաստաթղթեր) (այսուհետ՝ պահանջվող փաստաթղթեր) վճարման ընդունված ֆինանսական պարտավորությունների մեծության (հաշվարկված տարվա սկզբից աճողական կարգով) և հաշվետու եռամսյակի առաջին ու երկրորդ ամսվա համար փաստացի վճարված կանխավճարների, ինչպես նաև տարվա սկզբից վճարման ընդունված ֆինանսական պարտավորությունների դիմաց կատարված փոխանցումների հանրագումարի դրական տարբերության չափով:

2.2. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հաշվետու եռամսյակի՝

ա) առաջին և երկրորդ ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը՝ կանխավճարի տեսքով,

բ) իսկ երրորդ ամսվա համար՝ Նվիրաբերություն ստացողի կողմից մինչև հաշվետու եռամսյակի վերջին ամսվա 25-ը (4-րդ եռամսյակի համար մինչև՝ դեկտեմբերի 20-ը) Նվիրաբերողին ներկայացված սույն պայմանագրի 2.1. կետում նշված պահանջվող փաստաթղթերի պատճենների հիման վրա, սույն պայմանագրի N2 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված եռամսյակում (եթե պահանջվող փաստաթղթերը ներկայացվում են տվյալ եռամսյակի վերջին ամսվա 25-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), ոչ ավելի, քան վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափը:

2.3. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Նվիրաբերողը սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը, սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N2 հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցին և սույն պայմանագրի 2.1. կետին համապատասխան, փոխանցում է Նվիրաբերություն ստացողի գանձապետական հաշվին, իսկ տեղական գանձապետական բաժանմունքը Նվիրաբերություն ստացողին գումարները հատկացնում է << օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.4. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1. կետում նշված նպատակներին համապատասխան:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Նվիրաբերողին իրավունք է վերապահվում Նվիրաբերություն ստացողի կողմից սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման փաստն արձանագրելու կամ այդ մասին հավաստի տեղեկատվություն ստանալու դեպքում՝

3.1.1. տեղեկացնելով Նվիրաբերություն ստացողին՝ դադարեցնել սուբվենցիայի միջոցների հետագա հատկացումը՝ մինչև Նվիրաբերություն ստացողի կողմից համապատասխան պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելը,

3.1.2. ոչ նպատակային օգտագործված գումարը հետ գանձել Նվիրաբերություն ստացողից կամ նրա համաձայնությամբ հաշվանցել այն որպես կանխավճար՝ առաջիկայում սույն պայմանագրի շրջանակներում կատարվելիք աշխատանքների դիմաց,

3.1.3. դրանք հիմնավոր չճանաչելու դեպքում, առանց սուբվենցիայի գծով չվճարված գումարները վճարելու, միակողմանի լուծել սույն պայմանագիրը:

3.2. Նվիրաբերողը պարտավոր է՝

3.2.1. սուբվենցիայի գումարները Նվիրաբերություն ստացողին փոխանցել սույն պայմանագրի 2.1.,2.2. և 2.3. կետերով նախատեսված կարգով՝ N 2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան,

3.2.2. մասնագիտական խորհրդատվություն տրամադրել Նվիրաբերություն ստացողին բնապահպանական ծրագրով նախատեսված աշխատանքների (միջոցառումների) իրականացման վերաբերյալ:

3.3. Նվիրաբերություն ստացողն իրավունք ունի՝

3.3.1. սուբվենցիայի գումարները Նվիրաբերողից ստանալ սույն պայմանագրի 2.1.,2.2. և 2.3. կետերով սահմանված կարգով՝ N2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան,

3.3.2. մասնագիտական խորհրդատվություն ստանալ Նվիրաբերողից բնապահպանական ծրագրով նախատեսված աշխատանքների (միջոցառումների) իրականացման վերաբերյալ,

3.3.3. սուբվենցիայի գումարները սույն պայմանագրի 2.1., 2.2. և 2.3. կետերով նախատեսված կարգով կամ N2 հավելվածով սահմանված ժամանակացույցին համապատասխան չփոխանցելու դեպքում, միակողմանի լուծել սույն պայմանագիրը:

3.4. Նվիրաբերություն ստացողը պարտավոր է՝

3.4.1. Սույն պայմանագրի 1.1. կետում նշված միջոցները օգտագործել բացառապես սույն պայմանագրի N1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան:

3.4.2. հաշվապահական փաստաթղթերը վարել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովել սույն պայմանագրի 1.1. կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու Նվիրաբերողի ներկայացուցչի հնարավորությունը,

3.4.3. ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ենթածրագրի կամ միջոցառման ավարտից) հետո սուբվենցիայի չօգտագործված գումարը եռօրյա ժամկետում փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

3.4.4. սույն պայմանագրի 1.1. կետում նշված նպատակների իրականացումից հետո 30 օրվա ընթացքում Նվիրաբերողին գրավոր ներկայացնել Մեղրի համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված աշխատանքների (միջոցառումների), այդ թվում՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող, N 1 հավելվածով սահմանված պետության կողմից վերահսկվող չափանիշների կատարման և բնապահպանական ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների ստացման մասին վերջնական հաշվետվություն:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և շարունակում է գործել մինչև կողմերի բոլոր պարտավորությունների լրիվ կատարումը:

4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3.Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նվիրաբերող **ՀՀ բնապահպանության նախարարություն** ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին հ/հ 900011007649 ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Հ. Հովհաննիսյան ---------- (ստորագրություն) Կ.Տ	**Նվիրաբերություն ստացող** **Մեղրիի համայնքապետարան** ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն հ/հ 900305081144 Մեղրի համայնքի ղեկավար Մ. Զաքարյան ---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված 1
«27» դեկտեմբեր 2018թ.
կնքված N ՍՎ-4 սուբվենցիայի
տրամադրման պայմանագրի

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Նվիրաբերող
ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011007649
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է
Նվիրաբերություն ստացող
Մեղրիի համայնքապետարան

ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900305081144

Մեղրի համայնքի
ղեկավար
Մ. Զաքարյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների անվանումը	Ծրագրի կատարման համար տրամադրվող բյուջետային հատկացումների ընդհանուր գումարը (հազ. դրամ)	Ծրագրի իրականացման		Մեղրի համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված աշխատանքների (միջոցառումների) գծով պետության կողմից վերահսկվող չափանիշները և ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները
		սկիզբը	ավարտը	
«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն հաստատված Մեղրի համայնքի 2018 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացում ընդամենը, այդ թվում՝	**1 254.3**			
1. Համայնքի <<Մեղրիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	198.4	01.03.2018թ.	20.12.2018թ.	<<Մեղրիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին տրամադրված սնունդ՝ համաձայն ծրագրի
2. Համայնքի <<Ագարակի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	1 055.9	01.03.2018թ.	20.12.2018թ.	<<Ագարակի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին տրամադրված սնունդ՝ համաձայն ծրագրի

Հավելված 2
«27» փետրվար 2018թ.
կնքված N ՍԿ-4 սուբվենցիայի
տրամադրման պայմանագրի

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Նվիրաբերող
ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության համայնքների և պետական հիմնարկների բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011007649
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար
Հ. Հովհաննիսյան

(ստորագրություն)
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է
Նվիրաբերություն ստացող
Մեղրիի համայնքապետարան

ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
հ/հ 900305081144

Մեղրի համայնքի
ղեկավար
Մ. Զաքարյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԾՐԱԳՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Ֆինանսավորման ծավալը (հազ. դրամ)			
			1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ						
1	Համայնքի <<Մեղրիի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	198.4	49.6	99.2	148.8	198.4
2	Համայնքի <<Ագարակի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սաներին լրացուցիչ սննդի տրամադրում	1 055.9	263.9	527.8	791.7	1 055.9
ԸՆԴԱՄԵՆԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ		**1 254.3**	**313.5**	**627.0**	**940.5**	**1 254.3**